

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան)
հայտարարում է Մարզպետարանում քաղաքացիական ծառայության հետևյալ
ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին**

**1. Արթիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության գլխավոր
մասնագետ (ծածկագիր՝ 67-3.2-23)**

Հիմնական գործառույթները՝

1) Գործակալության պետի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները.

2) Ներկայացնում է առաջարկություններ սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ.

3) պարզում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը.

4) Ներկայացնում է առաջարկություն տվյալ ընտանիքին աջակցություն տրամադրելու վերաբերյալ.

5) սոցիալական աջակցություն հայցող անձին օգնում է հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

6) միջոցներ է ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և աջակցում նրանց դիմելու տարածքային մարմնին.

7) Գործակալության պետի հանձնարարությամբ ապահովում է իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ նպաստ տրամադրելը, ինչպես նաև տեղեկատվական ենթահամակարգերում ընտանիքների (անձանց) մասին ամրագրված տվյալների հավաստիությունը.

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

- պաշտոնների անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

- տիրապետում է անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների (Ցանկեր N 1-2):

* ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը՝ մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

* Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 20.05.2019թ.:

* Աշխատավարձի չափը՝ 150799 (հարյուր հիսուն հազար յոթ հարյուր ինսուսինը) ՀՀ դրամ:

* Աշխատանքի վայրը՝ ք. Արթիկ:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- * դիմում՝ Մարզպետարանի գլխավոր քարտուղարի անունով (դիմումի ձևը կցվում է),
 - * տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայականի/ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
 - * արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - * մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
 - * անձնագրի և/կամ նույնականացման քարտի պատճենը:
- ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ shirak.andznakazm@mta.gov.am, հեռ. 4-90-00-156:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի

գլխավոր քարտուղարին փոխարինող պարոն Գ.Բաղդասարյանին

.....-ից

դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

.....

դիմողի հասցեն

.....

դիմողի հեռ. (աշխատանքային, բնակ., բջջ.)

.....

Ծնված՝

.....
օրը, ամիսը, տարին, վայրը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ ժամկետային աշխատանքային պայմանագրով ինձ նշանակել ՀՀ Շիրակի մարզպետարանի

.....
.....
.....

.....
Ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Ժամանակավոր թափուր պաշտոնում:

Հայտնում եմ, որ՝

- Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
ունեմ, չունեմ
- Տիրապետում եմ հետևյալ համակարգչային ծրագրերին (Windows, Word, Excel, Access և այլն).....
- Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
ճանաչվել եմ, չեմ ճանաչվել
- ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
տառապում եմ, չեմ տառապում
- Այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից):
իրականացնում եմ, չեմ իրականացնում
- Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ:
զբաղվում եմ, չեմ զբաղվում

7. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ ինամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

գտնվում եմ, չեմ գտնվում

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝
ստորագրություն անուն, ազգանուն

«.....»2019թ.